

լու տեղն էր բռնվող աղահափսյա մարդուն ափ մը հողը աչքը կը կշտացնէ կըսենք, ինչ որ ճիշտ է՝ Մարդկութիւնը ինչ կրօնի ալ հավատա, իր երախտագիտական մատուցումը կընեն հողին, ծովը կամ զայն համարուելով:

Մեր մամիկները անցյալին մեջ հողին վրա կը պառկեցնէին իրենց նորածինը, որպէսզի անկէ ուժ առնելու ներկայիս մեր սօցափնները լեռը կը դրկենք հողին վրա պառկելու, որպէսզի անողջ, չարքաշ մեծանան, հողին շինված մարդուն պարտադրած շարիքները դիմագրավելու համար: Իր անցյալը հարգել գիտցող ազգին սրբութիւնը սրբոցնէ՛լ հողը, քանզի իր նախահայրերու նշխարները բովանդակողն է: Ազգերու այն զավակները, որոնք հեռացած են իրենց մայրենի՝ հողին, կը շարունակեն մնալ հեռավոր հայրենիքին զավակները՝ երբ իրենց նոր հաստատված տեղերը հողին կառչած են, փակ անոնք, որոնք հողին զատված ու քաղքենի կյանքը ընտրած են, անարյուն ջարդը մարդած է զիրենք ու հավիտենապես տնհարտացուցած: Այսպէս եղանք մենք Հունգարիոյ մեջ, Լեհաստանի մեջ. այսպէս լիտիւ ըլլանք դեռ ուրիշ տեղեր: Ոչ կրօնը, ոչ դավանանքը և ոչ ալ նոր հավատամք մը կրնան փրկել կորուստեւ Հողին փարիլը ոչ միայն հայրենասիրութիւնն է, այլ և դոյութեան ու ոչ գոյութեան հարց մը: Իզուր չէր, որ մեր թագավորներին մին, Արշակ, կաղանկավորված ներկայացած զինք գերեզմարող Շապուհին, երբ Հայաստանին բերված ու գետինը փռված հողին վրա կեցավ, անոր վրա փր խորխորութիւնը վերստացավ և հրամայեց զինք գերեզմարողին, որ վար իջնէ դահեն, զայն տալու համար իրեն:

Այսօր մեզի ներկայացուցած՝ մորմն զատված ափ մը հողը մեր նոր Հայրենիքն է, նոր իմաստ մը ունի հասունցած տարիք ունեցողին, նոր պայծառ մը ունի մեր երիտասարդ մանչին ու աղջկան: Աչքերդ վեր վերցուր, ո՛վ երիտասարդ, տե՛ս հպարտ Արարատի փեշերուն ծաղկող Հայրենիքը. անոր մեկ մասնիկն է այս հողը. ուժ առ անկէ. անցյալի փառք տես անոր մեջ, ներշնչումի աղբյուր ընտրե՛ր զայն. ցնդիդ

հավերժացման խորհրդանշը նկատե՛ր զայն, բու բովանդակ էութեամբ ՍԻՐԷ զայն: Գործն՝ տքնե՛ր ու շարշարվե՛ր անոր համար. սրտիդ մեջ նոր տաճարներ շինե՛ր անկէ, կենսունակ է անկէ, կենսունակութեամբ այն հողամասին, որ կէ բերված է: Հոն, ազգդ կապրի անոր վրա, բեգի համար: Թերահավատ մի ընար անոր ուժին ու գեղեցկութեան մասին: Աստված անգամ հողին ալիքի արժեքավոր բան մը չգտավ՝ իր պատկերը ներկայացնելու մեզի: Ներգործող ուժ մը է ան: Ապերախտ չէ, ան տահմանված է շտեմարան բարեաց ըլլալու: Վայ անոր, որ ցորենի տեղ տառասկ կը սերմանէ անոր մեջ ու փոխան ծաղկի փուլ:

Անոր մեջ աճող վարդն ու մեխակը իրենց բույրով ու դուլով Աստվածահաճո են. Անոր հանդէպ ունեցած սերդ պաշտամունքով խանձարուե՛ն: Այս մորմն զատված տիկուր, սակայն միանգամայն խոսուն ու զվարթ, կյանքով առի ափ մը հողը, տեսավ անվարձ անցյալին մեջ կոտորակումը և զուլումը ցնդիդ. այլոց քաղաքակրթութիւն մը ապահովելու սիրուն նախահայրերուդ արյունով ներկվեցաւ: Վեր վերցուր զլուխդ. անգամ մը ևս լալ դիտե՛ր զայն, նոր սրտգամ մը կուտա. լսե՛ր նոր երիտասարդներու վազքին ու խորոխ: Բարվածքին ձայնը, լսե՛ր ալիքի քան երբեք ուրախ երգերու ձայնը, լսե՛ր հոսող ջուրերուն առջև լուսին և ուժին հարուստներ. տե՛ս, տե՛ս անոր զավակներուն իմաստուն զեկավարութիւնը. փոխան վարձ, աղմկաւոր ազգասիրութեան տե՛ս գուսպ ու խորունկ ազգասիրութեամբ ճրմարիտ հայրենասերներու կերտումը: Վերցու՛ր այդ հողը. գորգուրա՛ն անոր վրա, պահե՛ր զայն սրտիդ ծալքերուն մեջ, քահանայի կապե՛ր անոր, օր մը, մեզի համար անտրոշ օր մը, երբ վերադարձի ձայնը լըսես, ուխտավորի մը պէս Հայրենիքդ դարձիր ու այդ հողը հետդ տար մորը հանձնե՛ր գալն. պինդ բազումով աշխատե՛ր անոր վրա՝ ՎԱՍՆՁԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Է՛ ԿԱՐԳԱՆՈՍԸ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՒ. ապրելու հույսդ դիւր անոր վրա, ապերախտ չէ, փրկութիւնդ իսկ է, ապրե՛ր անոր սիրով, ապրե՛ր անոր վրա որպէսզի մեա՛ն առ հալկե՛ն:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Հողը ստացող երիտասարդութեան աւուները՝ Հ. Կեռչեւյանի խոսած ուղերձից):

Շատ մը հանդեսներու, երեկույթներու և կուսակցական արարողութեանց ներկա դրանք ենք այս սրահին մեջ, բայց չեմ

խորհրդ թե անոնցմէ որեւէ մեկը, ունեցած ըլլա այն խորին ու վսեմ նշանա. կուսիւնը զոր այս երեկոյանը ունի, Ձե-

զի և մանավանդ մեզի՝ երիտասարդներու համար:

Հայրենակիցներ, ասիկա, իր խորքին մեջ, հանդես մը չէ, այլ՝ արարողություն մը, ազգային կարելի է ըսել սուրբ արարողություն մը, զոր կրնայինք կատարել նույնիսկ մեր եկեղեցիին մեջ, անոր խորանին ու կամարներուն խորհրդավորութեանը ներքեւ:

Հողի արարողության այս սովորությունը հին է թե ազգերու և թե ընտանիքներու մեջ:

Ինչ որ այս իրիկվան հանդեսը տարբեր հանդես մը կրնն ուրիշ հանդեսներն, այս բաժակ մը հայրենի հողն է՝ զոր հարգելի նախագահը հանձնեց մեզի:

Դժվար չէ ըմբռնել այն հուզիչ գաղափարը՝ զոր մեր հարգելի պատգամավոր եղբայրները ունեցած են, բաժակ մը այս հայրենի հողը՝ բերելով արտասահման և անոր մեջ մեզի հանձնելով՝ ամբողջ մեր հայրենիքին քաղցր իրականությունը:

Այս բաժակ մը հայրենի հողը, որ հանձնովեցավ մեզի՝ երիտասարդներու, միտմտեք՝ ու հոգին կը լցնեն այնպիսի նոր հուզումներով ու մտածումներով, զորս առաջին անգամ ըլլալով կը զգանք մենք մեր կյանքին մեջ:

Այն անհուն հաճույքին համար՝ զոր այս հողը կուտա մեր սիրտերուն, իմ ընկերներու կողմն, ևս կուզեմ նաև իմ հարգանքս ու երախտագիտությունս հայտնել մեր այն դուստրներուն ու նահատակներուն, որոնք անցյալին մեջ կամ դեռ երեկ, պայքարեցին այդ հողին համար, և թաղվեցան անոր ծոցը կամ անոր կարոտովը:

Ըսի՝ թե այս երեկոյան հանդեսը արարողություն մըն է, ազգային նվիրական արարողություն մը, և թե, անոր նշանակությունը ուրիշ տեղ չէ, այլ՝ այս սրահին մեջ:

Դուք, մենք՝ երիտասարդներս, և հայրենի այս ափ մը հողը, հավասարապես նյութը կը կազմենք՝ այս հանդեսին: Եվ այս պահը անքան նվիրական է մեզի երիտասարդներու համար, որ կարելի է ըսել թե այս իրիկվան սկսյալ, նոր կյանք և նոր պարտականություններ կը սկսին մեզի համար:

Չափազանցություն պետք չէ նկատել այս արտահայտությունս, որովհետև ազգի մը համար չկա ավելի պաշտելի բան մը քան իր հայրենիքը, չկա ավելի անհրաժեշտ բան մը քան այդ ազգին անունը պահող ու պահպանող երեցները և չկա ավելի թանկագին ուժ մը այդ ազգին համար՝ քան իր երիտասարդությունը: Եվ՝ այս բոլորը, այս

իրիկուն, կարելի է գտնել այս սրահին մեջ, իբր մեկ ամբողջություն:

Ափ մը հայրենի հող կը հանձնվի մեզի: Դժվար չէ ըմբռնել անշուշտ, թե ափ մը այս հողով և հողին մեջ ի՞նչ է որ կը հանձնվի մեզի, ի՞նչ է որ կը նետվի մեր ուսերուն:

Եթե այս սրահին մեջ կը բացակայի մոգիչ լեզուն, թո՛ղ այս բաժակ մը հայ հողը, իբր այդ խոսի մեզի իր դարավոր կյանքն և իր պատմության վիպական դրվագներն: Ինչ որ խոսվեցավ, արտասանվեցավ ու երգվեցավ անշուշտ հուզեց մեր հոգիները, խանդավառեց զանոնք, ու լեցուց այնպիսի նոր հույսերով, որոնք առաջին անգամ ըլլալով տարիներն ի վեր, նույնիսկ դարերն ի վեր, մեզի կը թվին մոտիկ, ավելի վառ ու պայծառ և ավելի իրականացալի: Բայց մեր երևակայությանը մեջ ինչ որ գտանք իբր ճշմարիտ և իրական այդ բոլորն, ասիկա այս ափ մը հայրենի հողը եղավ, այս սրահին մեջ, որուն նետեցինք մեռնալի մեծքները, գիտնալու համար թե ինչ դույնի և ինչ տեսակ հող մըն էր մեռնողը: Ուզեցինք դեռ մեր նալվածքները սուղել անոր մեջ, հոն տեսնելու, փնտռելու համար այն շատ մը սիրելի բաները, որոնք հոն են և հոն չեն միանգամայն: Կարոտը ունենիք մեր հայրենիքին, և այս հողին մեջ կուզենիք ամբողջ հայրենիք մը գտնել:

Ի՞նչ է այս ափ մը հողը և ի՞նչ կա ատոր մեջ, գուցե հարցնեն ոմանք իրենք իրենց. պատասխանը գտնել՝ դժվար չէ. հող չէ թե քիչ մը թևավոր ու վերացական թվի ան մեզի: Ըսելու համար՝ քանի մը բառով, սիրելի ունկնդիրներ, ասիկա մեր հայրենիքն է և մեր ժողովուրդն է միանգամայն: Անիկա մեր անցյալն է, մեր ներկան և ապագան միևնույն ատեն: Անիկա լուսաշող այն աստղն է, որով հայր տաքցուցած է իր հոգին, և իր պատմության դաժան ճամբան քալած հետեւելով անոր լուսին ու հույսին: Անիկա այն ուժն է, որ եթե դադրի գոյություն ունենալն մեր սիրտերուն ու մտածողությանը մեջ, կը դադրինք գոյություն ունենալն մենք ալ:

Այս ափ մը հողը շունի լեզու, որ խոսեր մեզի, եթե ան լեզու առներ ու պատմե՞ր թե ո՛վ է ինք, ո՛վ ենք մենք, հավանորեն մենք հոս ցնծայինք ուրախությամբ և հրապարտությամբ, գուցե լայինք դառնորեն, կամ թերևս վառներք այն վրեժով, որուն պատրույգին ծայրը միշտ վար առած կը պահենք մեր սիրտերուն մեջ:

Այս ափ մը հայ հողին, իր փոշիի մաս-

ներկներուն մեջ. շատ ավելի սիրտ ու միտք կա, շատ ավելի հաղթանակ, շատ ավելի վիշտ ու ծիծաղ, քան կարելի ըլլա գտնել մեր ամբողջ դիրքերուն ու գրադարաններուն մեջ:

Այս բաժակին մեջ, անշուշտ ոչ Երևանը կը գտնենք և ոչ ալ Կարսը: Անոր մեջն չեն խոսիր ոչ Արաքսը և ոչ ալ Եփրատը: Չենք տեսներ անոր մեջ Արագածն ու Արարատը իրենց ձյունապսակ կատարներով. հոն մեր աշխարհը տակ չեն փայլփլիր Սևանա և Վանա լիճները. — բայց այս ափ մը հողին մեջ կան այդ ամենը: Անիկա շատ լավ կը ճանչնա Հայկ Դյուցազն ալ, Տիգրան Մեծն ալ, կը ճանչնա Սասունցի Դավիթն ալ, Բաղրամյանն ալ: Եվ այն կապը, որ Հայկը Բաղրամյանին կը միացնէ, ունի իր պատմությունը, որ Երևանը կը միացնէ Կարսին, Արագածը՝ Արարատին, Արաքսը՝ Եփրատին, Սևանը՝ Վանա լիճին:

Եվ նույն օրենքով այս բաժակ մը հողը և մենք այս սրահին մեջ կը խորհրդանշենք ժողովուրդ մը իր հայրենիքով, հոգ չէ թե հատակը, որուն վրա կը կոխենք, հանգչի հողի մը վրա որ մերը չէ:

Սիրելի հայրենակիցներ, ասիկա այն հողն է, որ հրաշալի տեսիլքի մը անհուն հմայքով ապրած է մեր հոգիներուն մեջ: Ասիկա այն հողն է, որուն սարերուն ու ձորերուն մեջ, մեր կյանքին համար փնտռած ենք մենք միսն ու խորին իդեալներ: Անոր կարոտը մեր հոգիներուն տված է անդամադրելիորեն իր ծովուն դիմող հորձանահոս գետի մը սաստիկ կամքը: Մենք սիրած ու պաշտած ենք այս հողը, և աղոթած ենք դարերով՝ ապրիլ ու մենիլ անոր վրա:

Բայց դարեր անցած են, ու մենք չենք ունեցած երդիք մը, որուն ներքև մեր հողին զգա ապահովության ու խաղաղության անդորր վայելքը: Մեր կյանքը անցած է տառապանքի ու թշվառության հազար ու մեկ կայաններ: Պանդուխտ ու փառաւոր մեր սրտի ու կյանքի բառերը եղած են: Մարդկային դժբախտությանց ամբողջ տաժանքը կարծես մեզի վիճակված է ապրիլ այս երկրին վրա և երջանկությունը, մեզի համար արևի մը լուսավառ ջերմությունն ավելի՛ հյուսիսայգի մը ցուրտ խաբկանքը եղած է միայն:

Սակայն այսօր ազատ հայրենիք մը ունինք: Ունինք ոչ միայն ապահով երդիք մը մեզի համար, այլ գորավոր սպառնալիք մը մեր թշնամիին համար: Թեևս պզտիկ է ան իբր սահման, բայց այն բռնեցիկ գորան կը սեղմե՛ կամ կը սեղմվի ի նպաստ իրեն, անեղ է և անարկու՝ տասնևկես մատնյա բռնեցիկ է ան:

Հայր, այս պատերազմին ալ արդար դատի մը համար բերավ փրօժանդակությունը, աշխատանքի ու կյանքի ծանր բաժիններով: Հայրենիքն ներս թե դուրս, Հայուն արյունն ու քրտինքը հոսեցան կրկին անգամ: Այն արդար դատը, որուն համար կռվեցանք, վատահ ենք, որ այս անգամ իր արդար դատավորները պիտի ունենան, և արդար կերպով պիտե լուծվի մեր Արդար դատը:

Որովհետև, լեռներ ու քաղաքներ կան, որոնց ամբողջ Հայությունը կը նախ իդծով ու կարոտով: Որովհետև մեր իրավունքներն և անոնց համար մեր մղած պայքարը, կարմիր էջեր են պատմության գիրքերուն մեջ. աշխարհ զայն կը կարդա ու կճանչնա իբր ողբերգություն մը միայն:

Իբր գաղութահայ երիտասարդություն՝ շատ են մեր պարտականությունները, և ծանր են մեր աշխատանքները անշուշտ, բայց անոնք շատ ավելի ծանր ու դժամանեղած են անոնց համար, որոնք այսօր ավանդ կը թողուն մեզի այս բաժակ մը հողը: Այն ճամբան, որուն վրայն քայլեցին անոնք, այս հողին համար, մոռալ ու կոհաբերություններով լեցուն ճամբա մը եղավ. շատեր ինկան անոր վրա, բայց վերադարձները հաճախ իրենց նպատակին: Այսօր քնքուշ արև մը կփայլի մեր հայրենիքին վերև. արև մը, որ ոչ միայն կը տաքացնէ մեր հոգիները, այլ կը լուսավորեն նաև այն ուղին՝ որուն վրայն կրնանք քայլել այլևս առանց վախի և առանց սայթաքումի:

Պետք է գիտակցինք այլևս, որ դարը կազմակերպության դար է, և ոչ թե ցրվածություն: Չի բավեր հայ ըլլալ և հեռուեն դիտել հայրենիքը, կամ գոհանալ քանի մը ոսկի նվիրելով անոր: Հավաքական կազմակերպված աշխատանքն է միայն, որ կրնա լավագույն արդյունքներ տալ այսօր:

Երիտասարդ ընկերներուս կողմեն, կը համբուրեմ հայրենի այս բաժակ մը հողը. նախ արտասահմանի մեջ, ընդհանուր այս ներդաշնակության և մեր հայրենիքին առաջադիմությանը ու երջանկությանը համար:

Ապա երիտասարդ ընկերներուս կողմեն, կը համբուրեմ, այս բաժակ մը հայրենի հողը ու կը հավատամ, որ անոր սերը մեր սիրտերուն մեջ, կամք ու քաջություն պիտի տա մեզի:

Կաղոթենք, որպեսզի մեր աշխատանքի դաշտը, արտասահմանն շուտով Հայրենիք փոխադրվի: